

ՀԱՆԴԵՍ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈԼԻՍ

ԷՏՄՈՆՏՈՅ ՏԷ ԱՄԻԶԻՍ ԻՏԱԼԱՑԻՈՅ

(Տես Հտ. ԼԵ. 238, 289, — ԼԸ. 17, 165, 274, — ԼԺ. 174, 283):

ՀԻՆ ԱՐՔՈՒՆԻ ՊԱՍՏՆ

Ինչպէս 'ի կրանադա զԱհամարա տեսնելէն առաջ, այսպէս 'ի կոստանդնուպոլիս թուի թէ դեռ բան մը տեսած չես՝ քանի որ հին Պալատան պարտապաշտ մէջ չես մտած: Օրն հազար անգամ քաղաքին և ծովուն ամեն կէտերէն կը տեսնուի հօն այն դալարազեղ բլուրն, դաղտնեղ և խոստմամբ լցեալ, որ իբրև նոր բան մը միշտ հայեցուածք կը քաշէ, որ իբրև առեղծուած մը կը տանջէ զերկակայութիւն, որ ամեն մտածմանց մէջ միջամուխ կ'ըլլայ, այնչափ որ կը ստիպուի երթալ հօն սահմանած օրէդ առաջ, աւելի կրտսանքէ մ'ազատելու քան թէ բերկրութիւն մը փնտռելու համար:

Յիրաւի բոլոր Եւրոպայի մէջ չկայ ուրիշ երկրի անկիւն մը՝ որուն միայն առնուն արթնցընէ 'ի մտի գեղեցիկ և ահեղ պատկերաց աւելի օտարանշան խառնակութիւն մը. որուն վրայ այնչափ մտածուած և գրուած և գուշակելու ջան տարուած ըլլայ. որ այնքան տարտամ և ընդգիմախօս լրոց տեղի տուած ըլլայ. որ տակաւին այնքան անյագելի հետաքրքրութեանց, այնքան անմիտ նախապաշարմանց, այնքան զարմանահրաշ պատմութեանց նիւթ ըլլայ: Հիմայ ամենքը ներս կը մտնեն և շատերն ցուրտ ոգուով զուրս կ'ելլեն: Այլ կրնաս ապահով ըլլալ, որ նաև դարերէ ետքը, երբ թերևս օսմա,

նեան տիրապետութիւնն ուրիշ բան չըլլայ յԵւրոպա բայց եթէ յիշողութիւն մը, և այն չքնաղ բլրոյն վրայ նոր քաղաքի մը բազմամարդ ճամբաները կտրեն մէկգմէկ, պիտի չանցնի անկէ ճամբորդ մը առանց մտօք տեսնելու կոյսերական հին հովանոցներն, և առանց մտածելու նախանձով զմեզ իննևտաներորդ դարեանքս, որ օսմանեան մեծ արքունեաց կենդանի և խօսուն յիշատակները դեռ ևս գտանք այն տեղեաց մէջ: Ո՛ր գիտէ, քանի հնախոյզք համբերութեամբ պիտի փնտռեն նոր շինուածոց գաւթաց մէջ դրան մը կամ որմնի մը հետքը, և քանի բանաստեղծք ծովուն ափունքը սփռուած քիչ մը քարակուտից վրայ ոտանաւորներ պիտի գրեն: Կամ թերևս նաև յետ բազում դարուց այն պատերն տակաւին խնամով պիտի պահպանուին, և անոնց այցելութեան պիտի երթան գիտնականք, սիրահարք և արուեստաւորք, և չորհարիւր տարի հօն անցուցած առասպելական կեանքը պիտի զարթնուի և պիտի հռչակուի հատորոց և պատկերաց յաճախութեամբ բոլոր երկրիս երեսին վրայ:

Ճարտարապետական գեղեցկութիւնը չէ որ որմնց վրայ համաշխարհի քննասիրութիւնը կը ձգէ: Արքունի Պալատն Ահամարայի պէս արուեստական մեծ յիշատակարան մը չէ: Միայն արա,

բական արքունեաց առիւծուց գաւի-
թը կ'արժէ տաճկական արքունեաց բո-
լոր հովանոցները և բոլոր աշտարակնե-
րը։ Պալատան յարգն կը կայանայ պատ-
մական մեծ յիշատակարան մ'ըլլալուն
վրայ, որ կը բացայայտէ և կը լուսա-
ւորէ օսմանեան ցեղին գրեթէ բոլոր
կեանքը։ որ իր որմոց քարանց և իր
դարական ծառոց բնից վրայ՝ գրուած
ունի ինքնակալութեան բոլոր ներք-
սագոյն և ծածկաթաղոյց ժամանա-
կագրութիւնը։ Միայն վերջին երեսուն
տարեացը և զիտատանդնուպոյիս գրա-
ւելէն նախընթաց երկուց դարուցը կը
պակսի։ Ի Մէհմէմէտէ Բ' որ անոր հի-
մը դրաւ՝ ցԱպտիւլ-Մէհմիտ, որ զայն
թողուց՝ երթալ բնակելու Տօլմա-Պահ-
ճէի պալատը, ապրեցան հօն քսան
և հինգ Սուլթաններ։ Հօս հարստու-
թիւնն՝ այն ինչ ձեռք բերաւ իր եւրո-
պական մայրաքաղաքը՝ դրաւ ոտքը, հօս
եկաւ իր բաղդին ծայրն, հօս սկսաւ իր
անկումը։ Միանգամայն արքունիք մը,
բերդ մը և նուիրատուն մ'էր։ կար
հօն ինքնակալութեան ուղեղն և իս-
լամականութեան սիրտն։ քաղաքի մէջ
քաղաք մ'էր, վսեմափառ և շքեղա-
շուք զոգեակ մը, բնակեալ ժողովրդ-
դեմէ մը և պահպանեալ բանակէ մը,
որ իր պատուարաց մէջ կը բովանդա-
կէր անթիւ զանազանութիւն մը շինուա-
ծոց, զուարճութեանց տեղեր և արհաւ-
րաց տեղեր։ քաղաք և զիւղ, արքունիք-
ներ, զինարաններ, դպրոցներ, պաշ-
տօնարաններ, մշկիթներ։ ուր զմի-
միանս կը փոխանակէին հանդէսը և
կոտորածք, կրօնական արարողութիւնք
և տարփանք, զեսպանադիտակէն տօ-
նախմբութիւնք և յիմարութիւնք։ ուր
Սուլթանք կը ծնանէին, կ'ամբառնային
'ի գահ, կ'ինկնային, կը բանտարկու-
էին, կը խղզուէին։ ուր ամենայն զա-
ւակցութեանց որոգայթը կը լարուէր
և կը հնչէր ամենայն ապատամբութեց
աղաղակն։ ուր կը հռէր ինքնակալու-
թեան մաքրագոյն ոսկին և արիւնն։ ուր
հարիւր ժողովրդոց գլխոյն վրայ չոլա-
ցող անհուն սուսերին երախակալն կը

դարձդարձէր։ ուր գրեթէ երեք դար
ակնկառոյց եղան Եւրոպա անհան-
դարտ, Ասիա կասկածոտ և Ափրիկէ
ահաբեկ, ինչպէս ծխաշունչ հրաբուղի
մը՝ որ սպառնայ երկրի։

Այս հրէշաւոր արքունիքն Ստամբուլի
ամենէն արեւելեան բլրոյն վրայ շինուած
է, որ մեղմով կը խոնարհի դէպ'ի Մար-
մարա ծովը, դէպ'ի Վոսփորի բե-
րանն և դէպ' յիսկնղլիւր։ հին ժամա-
նակը Բիւզանդիոնի Միջնաբերդէն, քա-
ղաքին մէկ մասէն և ինքնակալաց մե-
ծամեծ պալատանց թեւէ մը գրաւած
միջոցը։ կոստանդնուպոլսոյ գեղեցկա-
գոյն բլուրն է և բոլոր եւրոպական ա-
փանց բնութեան սիրելագոյն դարա-
ւանդը։ Հօն կ'ընթանան, իբրեւ 'ի կեդ-
րոն, կրկին ծովը և կրկին նեղուցք։ հօն
կը վերջանային արեւելեան Եւրոպոյ
զինուորական և տուրհաւիկ մեծամեծ
ճանապարհներն։ հօն բիւզանդական
ինքնակալաց ջրմուղներն ջրոյ հեղեղ-
ներ կը տանէին։ Թրակիոյ բլուրք կը
պայտպանեն զոյն հիւսիսոյ հողմերէն.
երեք կողմերէ ծովը զինքը կը թանայ.
կալադա՝ նուազանգստին կողմէն հե-
ռուէն կը նկատու զնա։ Սկիւտար՝ Վոս-
փորի դիէն իրեն ինչայի, և Բիւթա-
նիոյ մեծամեծ լեռինքն իրենց ձիւնա-
խողաղ գագաթներովն Ասիոյ հորիզո-
նը կը ծածկեն իրմէ։ Մեծ մայրաքաղա-
քին ծայրը բարձրացած մենաւոր բլուր
մ'է, գրեթէ կղզիացեալ, ամրաբերձ
և ամենագեղ, որ թուի 'ի բնութենէ
եղեալ մեծ միապետութեան մը պա-
տուանդանն ըլլալու և աստուածակերպ
իշխանի մը հիշտալի և գազտնի կեան-
քը պաշտպանելու համար։

Բոլոր բլրոյն ոտքն չըջապատեալ
է ատամնաձէ բարձր պատերով, կող-
մնակի ունենալով ստուար աշտարակ-
ներ։ Մարմարա ծովուն ափունքն և
իսկնղլեր երկայնութեամբ այս որմուն-
քը՝ նոյն իսկ քաղաքին պարիսպներն
են։ ցամաքի կողմանէ Բ Մէհմէմէտէն
բարձրացած որմունքն են, որոնք Պա-
լատան բլուրը կը բաժնեն այն բլրէն՝

որուն վրայ կը բարձրանայ Նուրի-Օսմանիէ Մզկիթն, ուղիղ անկեամբ կը փոստորին Արքունի Դրան մօտ, Սուրբ Սոփիայի գիմնոցէն կ'անցնին, և գէպ յառաջ մեծ կոր մը ծրագրելով, կ'երթան կը միանան Ստամպուլի պարսպաց հետ ժովուն ափունքը: Այս Պալատան արտաքին շրջապատն է: Թատկապէս կուշուած Պալատն՝ զազաթան վրայ կը տարածուի, ինքն ալ բարձր պատերով պարփակուած, որ կը ձևացընեն բլրոյն մեծ ամրոցին իբրև կեդրոնական ապաստանարան մը:

Այլ ունայն աշխատութիւն կ'ըլլայ նկարագրել Պալատն ինչ վիճակի մէջ որ է՝ ի ներկայումս: Երկաթուղին արտաքին որմունքը կը կտրէ կ'անցնի. մեծ հրգեհ մը 1865ն շատ շէնքեր արեց. պարտէզներն մեծաւ մասամբ ամայազցալ են. բարձրացան հօն հիւանդանոցներ, զինուորանոցներ և զինուորական դպրոցներ. քանի մը մնացած շինուածոց ձևերն և գործածութիւնն փոխուեցան. և թէպէտ գլխաւոր որմունքն կը մնան՝ հին Պալատան բոլոր ամբողջ ձևը դեռ ներկայացընելու չափ, սակայն պզտի փոփոխութիւնքն այնքան և այնպիսիք են, և գրեթէ երեսուն տարիէ ի վեր ամենայն իրաց երեսէ ձգուին, անարատ մնացած մասերուն կերպարանքը այնպէս փոխած է, որ կարելի չէ հաւատարմութեամբ տեղը նկարագրել առանց ի գերև հանելու նաև չափաւորագոյն իսկ ակնկալութիւնը:

Հաւագոյն է թէ՛ գրողին և թէ՛ կարդացողին համար՝ այս համբաւատենչ Պալատը տեսնել ինչպէս որ էր օւմանեան փառաւորութեան գեղեցիկ ժամանակաց մէջ:

Այն ատեն, ուր որ կրնար միով հայեցուածով ընդգրկել ամբողջ բլուրը, կամ բարձրագոյն աշտարակներէն մէկուն ատամնաձևերէն, կամ Սրբոյն Սոփիայի մզկիթին մինարէէ մը, կը վայելէր հիւսիսէն տեսարան մը, իրփուն, վոսփոթոնի և նաւահանգստին կենդանի կա-

պուտին մէջ, տորմդին առագաստից սպիտակ մեծ կիսաբալորակին ներսը, բլրոյն կանանչ ընդարձակ թփուտը կ'երևար, շրջապատեալ սրմովք և աշտարակօք, բոլորեալ թնդանթովք և պահանորօք. և այս թփուտին մէջ տեղը՝ որ ահագին ծառոց անտառ մ'էր, որոնց մէջ ձամբաներու բաւիղ մ'ըսպիտակագոյն կ'երևէին և ծաղկաւետ հազար ածուներուն գոյներն կը ծիծաղէին, կը տարածուէր՝ ի բարձրակողմն բլրոյն՝ պալատան շինուածոց լայնածաւալ ուղղանկիւնն, երեք մեծ գաւթ թափուած, կամ լաւ ևս անհաւասար երեք հրապարակաց չորս կողմը շինուած երեք փոքր քաղաք. յորոց կը բարձրանային խառնակ բազմութիւն մ'երկայագեղ տանեց, ծաղկալից տամալեաց, ոսկեղծ գմբէթներու, սպիտակ մինարէներու, հովանեաց օգախաղաց զազաթներու, հոյակապ դրանց կամարներու, պարտէզներով և անտառիկներով անջրպետած, և սաղարթներով կէս ի կէս ծածկուած: Սպիտակ փոքր մայրաքաղաք մ'էր, չողչողուն և անկարգ, վրանաց ձամբարի մը պէս թեթև, ուսկից չդիտեմ ինչպիսի հեշտալիք, հովուական և պատերազմիկ բան մը կը շնչէր. մէկ կողմը ժողովրդով և կենդանութեամբ լցեալ ուրիշ կողմ մը գերեզմանատան պէս ամայի և լուռ. ուր ամենայն ինչ հուանի և արևն ոսկեփայլ. ուր մարդկեղէն ամեն աչաց անմատոյց և ընկղմեալ յաւիտեանական ստուերի մը մէջ. անթիւ ջրոյ ցայտերով զուարթացած, այլաժառուլ թեանց և մթութեան և զօրաւոր դունոց և արծաթի և կապուտակային երանգոց զուգախառնութեանց հազար ընդդիմակօք գեղերփնեալ, սեանց շարուց կիւճերէն և լճակաց ջրերէն ցոլացեալ, և ծիծառնց և աղանահաց ամպերով վեթարթուցեալ:

Այսպիսի էր քաղաքին արտաքին տեսքն, բարձրէն նայողին աչքին ոչ այնչափ ընդարձակագոյն. այլ ներսն այնպէս բաժնուած և ստորաբաժնուած և կնճռած, որ յիսուն տարիէ ի վեր հօն

ապրող ծառայք, մէջէն չէին յաջողեր ելլել, և Եէնիչէրէք՝ որ երբորդ անգամ կը խուժէին հօն, դեռ կը մուրդէին մէջն:

Գլխաւոր դուռն էր և է միշտ Պապ-Հիւմայուն, կամ Դուռն արքունի, որ կը նայի փոքր հրապարակին վրայ, ուր կ'ամբառնայ Սուլթան Ահմէտի աղբիւրն, Սուրբ Սոփիայի մզկիթին ետև: Սպիտակ և սեռ կիճէ մեծ դուռ մ'է, արաբ ճօխ զարդերով պնծած, որուն վրայ կը յենու բարձր շէնք մը, ութ պատուհաններով, 'ի դուռս ցցուեալ տանիքով մը ծածկուած. և այն արաբ և պարսիկ խառն ճարտարապետութեան կը վերաբերի, յորմէ կը ճանչցուին աշխարհակալութենէն ետքը նախկին աւանց մէջ Տաճկաց կառուցած գրեթէ բոլոր հոյակապ շէնքերն, բիւզանդական ճարտարապետութեան նմանիլ սկսելէն առաջ: Գրան վրայ, 'ի կենայ տախտակի մի, դեռ կը կարգացուի Բ Մէհմէմմէտի արձանագրութիւնն, — Ալլահ իւր ստացողին փառքը յաւիտեան պահէ — Ալլահ իր շինուածը հաստատէ — Ալլահ իւր հիմունքը ամրացընէ: Այն դուռն է, որու առջև կու գար ամեն առաւօտ Ստամպուլի ժողովուրդն տեսնելու, թէ Տէրութեան կամ արքունեաց աւագորերոյ որոն գլուխն ինկած է գիշերուան մէջ: Գլուխները գամով մը կը կախուէին երկու խորշից մէջ, որ գրեթէ անեղծ՝ դեռ կը տեսնուին մօտից աջ և ձախ կողմը. և կամ արծաթեայ տաշտի մը մէջ յերևան կը դուռէին, որուն քով գտնուած էր ամբաստանութիւնն և վրձինն: Գրան դիմաց հրապարակին վրայ կը ձգէին խեղդանի դատապարտեալ գիւղերը. և հօն կանկ կ'առնէին, Պալատան առաջին շրջապատին մէջ մտնելու հրամանին սպասելով՝ յաղթութեանց ախոյեանքը բերելու եկող հեռաւոր բանակաց չոկատներն. և թաւաւորական շէմին վրայ կը դիզէին զէնք, գրօշներ, զօրավարաց կառափներ և աբիւնազանգ չընդ նշանադրեստներ: Կը

պահպանէր դուռը գափուճուներու քատուար գունդ. մը, պերճապաճոյճ հադուած պէյներու և փաշաներու որդիք. որոնք որմոց և պատուհանաց բարձրէն ելլող անող ամբոխին անդադար թաւափօրին ներկայ կ'ըլլային, կամեալ կեցընէին լայն վաղակաւորքը հետաքրքրացունմունչ խուժանը՝ հօն եկած ճեղքուած է մը տեսնելու գաղտագողի գաւթի կտոր մը, երկրորդ դրան բեկոր մը, գէթ այն ահագին և զանխուլ արքունեաց շառայլ մը, նիւթ այնքան ըղձից և այնքան զարհուրանաց: Անկէ անցնելու ատեն, յերմեռանդն մահմետականը վեհագոյն Տիրով համարաղօթք մը կը միմնջէր. աղքատ և գոռոզ պատանեակն կ'երազէր այն օրը՝ յորում մ'պիտի անցնէր այն շէմը՝ ձիոյ թուղը ընդունելու համար. գեղանի և ցնցոտի աղջիկն խաբուսիկ յուսով մը գատընին շողշողուն կեանքը կ'երևակայէր. սպանդից ազգականք գլուխին կը խոնարհեցընէին. և բոլոր հրապարակին մէջ խիստ լուրթիւն մը կը տիրէր, միայն օրն երեք անգամ ընդհատուած Սրբոյն Սոփիայի միւսէզգիւնին գոչաւոր ծայնէն:

Հիւմայուն դռնէն Եէնիչէրեաց կոչուած գաւիթը կը մտցուէր, որ Պալատան առաջին շրջապատն էր:

Գեռ կոյ այս մեծ գաւիթն, պարփակեալ անկանոն, երկայնաչափ տուներով, և ծառոց ազգի ազգի խմբերով հովանաւորեալ, յորս Եէնիչէրեաց ըստուած սոսկապիթխար սօսին, որուն բունն ընդգրկելու տասն մարդիկ չեն բաւեր: Մտնողին ձախակողմը, Սուրբ Եռիչէի եկեղեցին կայ, հիմնեալ 'ի Մեծէն Կոստանդիանոսէ, և փոխեալ 'ի Տաճկաց 'ի զինանոց: Աւելի անդին և բուրջորս կողմը Պալատան հիւանդանոցն կար, հասարակաց գանձուն շինուածն, նարնջից շտեմարանն, կայսերական ախոռն, խոհանոցն, գափուճուներուն զինուորանոցն, փողերանոցն, և Աղբուրեաց աւագ սպայից տունքն: Մեծ սո-

աւոյն տակն կան դեռ քարէ սինապներ, որոնց վրայ գլխատուծիւնը կը կա տարուէին: Հօսկէ կ'անցնէին անոնք ամենքն որ յլտեանն կամ առ փատի շահն պիտի երթային: Էր իբրեւ բաց օթեայ տարապայման վայրագաւթ մը, միշտ խռկեալ, յորում ամենայն ինչ ընդ խառնումն և զբաղումն էր: Հարիւր յիսուն հացադորձք և երկու հարիւր ընդ խոհարար և ընդ խոհանոցի մանուկ՝ մեծամեծ խոհակերոցաց մէջ կ'աշխատէին, անսպառ ընտանեաց համար պարենը պատրաստելու, « որ Մեծ Տիրոջն հացը և աղը կ'ուտէր »: Հակառակ կողմէն կը խոնէին պահապանք և ծառայք, կեղծ հիւանդք, մեծածախ հիւանդանոցին մեղկ կենաց մէջ մտնելու համար, յորում կը պատուղէին քսան բժիշկ և սարկաք բանակ մը: Զորոց և ուղտուց երկայն կարաւաններ կը մտնէին խոհանոցաց պաշտօնները երբեք կամ յաղթուած բանակաց զէնքեր բերելու Սուրբ Եփեսոսի եկեղեցին, ուր առ երկ Մէհէմէտէ տէր յէյի վաղակաւորն և Թիմուրլէնկի բազպանն: Կ'անցնէին հարկապահանքը, ետևէն ոսկով բռնաւարեալ գերիք, ուղղեալք 'ի գանձատունն, ուր կային այլքան հարստութիւն, ինչպէս կ'ըսէր Մեծին Սիւլէյմանի մեծ վէզիրն՝ Սոգուլու, ինչուան արծաթէ խարիսխներով և մետաքսէ պարաններով սորմիոյներ շինելու: Բուլղարիոյ գեղեցիկ վարաւան, դասպաններէն տարուած՝ երամովին կ'անցնէին Գ. Մուրատի ինն հարիւր ձիերը, որոնք միաձայլ արծաթի մորոց մէջ կը բուծանէին: Սուլտանութենէ մինչև իրիկուն նշանազգեստուց փողփողուն վխալ մը կար, յորս կը փայլէին եէնի չէրեաց սպիտակ բարձր փակեղներն, սոյազներու ճայի մեծամեծ ցցունքն, թիկնապահք Սուլթանին, փէյիքներու արծաթազօծ սաղաւարտքն, տկանա կուռ գօտով մը մէջքերնին զսպումած ոսկեհոն բանկոն մը հագած: զուշուֆիւ-պալլաքներն, պաշտօնեայք 'ի ծառայութեան սենեկի սպայից, իրենց զլխարկներէն կախուած բրդէ

խոպոպներովն: Խաւսէքներն, ձեռքերնին իրենց խորհրդական դաւազանովն: պալլաքներն՝ տապարով: մեծ վէզիրին ծառաներն՝ արծաթեղէն շղթայիկներով զարդարուած խալազանք: պալլաքներն, պարտիզաց պահապանք, ծիրանեղոյն մեծամեծ զլխարկներով: և հարիւր դունովք և հարիւր խորհրդական նշանք զանազանեալ ամբոխ մ'աղեղնաւորաց, տիգաւորաց, դանձապահաց, կորիձ պահապանաց, յաւիտազն պահապանաց, սեաւ ներքինեաց և սպիտակ ներքինեաց, զինակրաց և չափուններու, բարձրահասակ և հուժկու մարդիկ, խրոխտ կերպարանք, Արքունեաց տիրակալն վսեմութեամբ տպաւորեալ, որ անուշահոտութեամբ կը լեցընէին ըզգաւթը: Մանրախոյզ և խիստ ժամազէտ մ'այն առերևոյթ շփոթին մէջ կը կարգադրէր գործերը: Այն գաւթին մէջ ամենքը կը շարժէին, ինչպէս հուլովական ինքնաշարժ մեքենայք կաղմածը ներփակող տախտակին վրայ: Երբոր լուսնար, կ'երևէին Արքունեաց երեսուն երկու միւլեղիկներն, Ստամբուլի քաղցրաձայն երգեցողաց մէջէն ընտրուած, պալատան մէկթաց մինաբներէն արշալոյսն իմացընելու, և 'ի տամալեաց վար իջնող քաղզէից և աստեղագիտաց կը պատահէին, ուր անցուցեր էին գիշերը՝ զննելով 'ի տամալեաց պհաստատութիւնը՝ Սուլթանին զբաղմունքը բարեբաղդ ժամերը սահմանելու համար: Յետոյ կը մաներ Պալատան առաջին բժիշկն՝ փառիշահին առողջութեան լուր առնելու: Կ'երթար իւլէմա ուսուցիչն վեհափառ աշակերտին կրօնական սովորական դասը տալու: առանձնական քարտուղարն՝ իրիկունն ընդունած աղերսագիրներն իրեն կարդալու: արուեստից և գիտութեանց վարժապետքն կ'անցնէին երրորդ գաւթի բերթալու կայսերական մանկալեաց դաս տալու համար: Իւրաքանչիւրն իր ժամուն, օգոստափառ անձին ծառայութեան մէջ եղող ամենայն երևելի հօնկէ կ'անցնէին երթալու օրուան

համար հրամաններն առնելու, Պօսթանճը պաշըն, կայսերական թիկնապահաց սպարապետ, ոստիկան Պալատան և Վոսիորի և Պրոպագանդայի ափոնըը ամուսնած Սուլթանին դաստակերտաց, կու գար տեղեկանալու թէ արդեօք Մեծ Տէրն կը հաճի ծովուն վերայ շրջագայութիւն մ'ընելու, վասն զի զեկափարութիւն իրեն կ'իշխնար և իրեն պօստաւնձիւներուն՝ թիակաց պատիւն, փատիշահին կամքը հարցնելու կու գային որոց մեծ տեսուչն, մեծ բազէպանին հետ մէկտեղ, սպիտակ բազէից որսորդաց գլխաւորին, անգեղց որսորդաց և շահէնից որսորդաց գլխաւորաց հետ միտրան, կու գար քաղաքին ընդհանուր ոստիկանն, գունդ մ'ոստիկանաց խահանդաց, դրամից, համարաց, գանձուն, մի զմիոյ կնի, նախակարգեալ դասաւորութեամբ մը, իւրաքանչիւրն իրեն աղերսագիրերովն, իրեն պատրաստած բառերովն, իրեն մասնաւոր զգեստով մը զանազանուած ծառայից հետ, Աւելի ուշ, ետեւէն քարտուղարաց և մտերմաց չքաղորով մը, կ'անցնէին Գըմբէթի վէդիքը ատենան երթալու համար, կ'անցնէին նշանաւոր անձինք՝ ձիաւոր, կառաց մէջ, պատգարակի մէջ, և ամենքը կ'իջնէին երկրորդ դուռը, ընդ որ միայն ոտքով կրնար անցուիլ։ Բոլոր այս ամբողջ գիւրաճանաչելի էին, ըստ պաշտաման, փակեղաց ձևէն, թեզանեաց կտրուածքէն, մուշտակաց տեսակէն, աստառաց գոյներէն, թամբից զարդերէն, մարուքը ամբողջ կամ միայն ընչացք ունենալէն, Այն անպզգար խառնին մէջ չփութութիւն մ'աւ չէր հանդիպեր։ Միւֆթին սպիտակ էր. վէդիքը բաց կուպուտէն կը ճանչուէին, սենեկապանք ծիրանագունէն. մուֆթ կապոյտն կը տարբերէր օրինադիր վեց առաջին ըսպայքը, էմիրներու գլուխն և Մէքքէի, Մէտինէի, կոստանդնուպոլսոյ դատաւորըր. մեծ իւլէմաներն մանուշակի գոյնն ունէին. միւստէրիսներն և շէխներն բաց կապոյտ կը հագնէին. ամենապայծառ երկնագոյնն կը նշանակէր

աւատական չափունէրը և վէդիքնբրու աղաները. մուֆթ կանաչը կայսերական ասպանդակի աղաներուն և նուիրական դրօշը տանողաց առանձնաշնորհութիւն մ'էր. սուլթանին ախոռներուն գործակատարքն տօգոյն կանաչը կը հագնէին. բանակաց զօրաղուխը կը հագուէին կարմիր կօշիկներ, Դրան սպայքը գեղին, իւլէմաներն՝ կապուտակ. և գունոց աստիճանին կը համապատասխանէր խորին խոնարհմանց աստիճանաւորութիւն մը։ Պօսթանճը-պաշըն, Պալատան ոստիկանութեան գլուխը, հրամանատար բանտապանից և դահճաց բանակի մը, որ իր անուան և իր քայլից ձայնովն սարսափ կը սփռէր, կը կտրէր գաւիթը զեմնամած գլխոց կըրկին կարգաց մէջէն։ Կ'անցնէր ներքինեաց գլուխն, ներքին և արտաքին Արքունեաց մեծ մարաշխոս, և կը ծռէին սաղաւարտք, փակեղք, ցցուիք, իրեն վար մղուած 'ի հարիւր անտեսանելի ձեռաց։ Մեծ ողորմաբաշին հազար մեծարանաց ողջունից մէջէն կ'անցնէր։ Բոլոր Սուլթանին մօտեցողք, ասպատանապատուց գլխաւորն՝ որ իրեն ասպանդակը կը բռնէր, առաջին սենեկապանն՝ որ իր կօշիկները կը տանէր, Սիլիհտար աղան՝ որ իր զէնքերը կը փայլեցընէր, սպիտակ ներքինին՝ որ գորզը տարածելէն առաջ լեզուով յատակը կը լիզէր, մանկլաւիկն՝ որ լուացմանց համար ջուրը կը լեցընէր Սուլթանին, այն որ որսորդութեանց հրացանը կու տար իրեն, այն որ իրեն ապարօշները կը պահէր, այն որ իրեն աւականակապ ցցունից փողին կը թօթափէր, այն որ իրեն սեւա աղուեծու զգեստաց հոգ կը տանէր, կ'անցնէին հետաքրքրութեան և յարգանաց մասնաւոր ցուցից մէջէն։ Մեզմ' փսփսոց մ'Արքունեաց քարոզչին և հանդերձանոցին մեծ տեսչին անցից ետեւն և առջեւն կը կանխէր, որ կայսերական տօնից ժամանակ դրամները կը նետէր ժողովրդեան։ Նետահարեալ 'ի բազում նախանձաբեկ հայեցուածոց՝ կ'անցնէր այն բարեբաաստիկ մահճետականն՝ որ

տասն օր մէյմը Սուլթանաց Սուլթանին գլուխը կ'ածիլէր։ Մասնաւոր փութով մը կը բացուէր ամբոխն առաջին վիրաբուժան գիմաց՝ կարգեալ 'ի պաշտօն թլփատութեան իշխանաց, առաջին ա. շարտի զիմաց՝ որ կը պատրաստէր զատրններուն և հարճից արտեանանց համար զծարիրն, ծաղկանց մեծ տեսչին գիմաց, զաղեալ 'ի գործ հաճոյից գեղանեաց, որ կը կրէր իր պարեգօտին տակը իր ոսկեզօծ վարդիւք զարդարուած քերթողական վկայագիրը։ Առաջին խոհարարն իրեն շողմիչ ողջոյնները կ'ընդունէր։ Պատուադիր ժւպիտը կը բարեկէն թութակաց և սոխակաց պահապանը, որոնք կրնային զաղտնածածուկ հովանեաց սեամբ անցնիլ։ Հասարակաւոր անձինք էին, բաժնուած անտիճանաւորեալ մանրամասնարար զասակարգութեան մը, յիսուն հատորոց ծխարանով մը ուղղուած, նրկարելի հազար տարազով զգեստաւորեալ, որ կ'անցնէին կամ կը պտըտէին ընդարձակ գաւթին մէջ, և ամեն վայրկենին նոր բազմութիւն մ'էր։ Երբեմն երբեմն կ'անցնէր արագութեամբ պատգամաւոր մը և ամենայն գլուխը կը դառնային։ Գարա-գուրազ վեզիրն էր, զըրուցատար Սուլթանին և առաջին խորհրդականին մէջ, որ կ'երթար մեծ վեզիրին ծածուկ պատգամաւորութիւն մ'ընելու։ Գաւիռնաձու մ'էր, որ կ'առկածանաց տակ ինկած փայայի մը տուն կ'ընթանար, տանելու իրեն՝ անմիջապէս ատենանը ներկայանալու հրամանը։ Քարի յրոց տանողն էր, որ կու գար փատիշահին իմացընելու Մէքքէի մեծ կարաւանին բարեշաղղ հասնիլը։ Ուրիշ մասնական պատգամաւորներ Սուլթանին և Տէրութեան մեծամեծ սպայից մէջ, իւրաքանչիւրն տիտղոսով մը տարբերեալ և ճանաչելի՝ զգեստաւ մասնաւորութենէ մը, ճամբարելու բանային վաղելով, և գաւթին երկու գունեղէն աներևոյթ կ'ըլլային։ Կ'անցնէին արճագործերու խումբեր՝ արքունեաց խոհակերտները երթալու, կայսերական որսորդաց գունդեր՝ ոսկեզօծ մախադից բե-

ռամբ ծռած։ բեռնակրաց կարգեր՝ կերպասով ծանրացած, յառաջեալք 'ի Մեծ վաճառականէն՝ Սուլթանին մատակարարէն։ Կալանաւորաց գումարտակներ՝ առաջնորդեալք 'ի գերեաց Պալատան ամենէն զժնդակադոյն աշխատութեանց։ Սպա հարիւր խոհակերոցի մանկունք, օրն երկու անգամ, կ'ելլէին խոհանոցներէն և կը տանէին ընդ ստուերաւ սօսեաց, կամարակապից տակ, որմոյ երկայնութեամբ, բրնձի ահագին բուրդեր և ամբողջ խորոված խոյեր։ պահապանաց և ծառայից խառնաղանջ մը կը վազէր, և մեծ գաւթին բանակի մը կողմոց զըւարճայից տեսարանը կ'ընծայէր։ Բիշմուքը տեսիլը կը փոխուէր, և կը տեսնուէր օտարական դեսպանութեան մը յառաջ գալն ոսկւոյ և կերպասու կրկին որմոց մէջէն։ Հօն, ինչպէս մեծըն Սուլթանին կը գրէր առ շահ Պարսից, « կը զեղոյր ամենայն աշխարհ »։ Կարողութեալ պատգամաւորներն կը գտնուէին հօն աւելցնելու փրանկիսիւսի Ա պատգամաւորաց։ Հունգարիոյ, Սերպիոյ և լեհաստանի պատուիրակքն կը մտնէին հօն մերձ առ ճննողայի և վենետիկոյ հասարակապետութեան դեսպանաց։ Փէյքիձը-պաշըն, ընծաներն ընդունողն, ընդ առաջ կ'ելլէր օտար կարաւանաց Պաշա-Հիւմայունի սեմին վրայ, և հազար հանդիսատեսաց մէջէն կը յառաջէին փիղք՝ որ կը բերէին ոսկեղէն գահեր, վիթխարի վիթեր, առիւծուց գառազեղներ, փաթարստանի ձիեր, և անապատից ձիեր, վագերց մորթեր հազած և ծանրաբեռնեալ փղի ականջաց վահաններով։ Պարսկաստանի պատուիրակքն՝ ջինաց ամաններով։ Հնդկաստանի Սուլթանաց դեսպանքն՝ գահարով լեցուն ոսկեղէն արկղներով։ ափրիկեան թագաւորաց պատգամաւորքն՝ մարց փորիքէն փըրցուցած ուղտուց մորթէ գորգերով և արծաթեալ կերպասուց կտորներ՝ որ տաան գերեզման թիկունքը կը խոնարհեցնէին։ հիւսիսային Տէրութեանց դեսպանքն՝ մուշտակօք և թանկագին զի-

նուրբեռնաբարձեալ ծառայից դուստր-
տակներ ետևնէն: Բարեկալից պատե-
րաղմներէն ետքը, կը մտնէին փատի-
շահին երևնալու շղթայակապ և գերի
իշխանուհիք, քողարկեալք, իրենց ա-
պագէն և տրտում չքաղկրներով, և
ամեն հասակէ և ամեն դունէ ներքի-
նիք, յափշտակեալք իբրև աւար պատե-
րաղմի, կամ սուեալք՝ ի պարգի ի պար-
տեալ իշխանաց, եւ մի և նոյն ժամա-
նակ յաղթական բանակաց սպայքն
Գրան ծառան դուռը կը խռնէին, վար
դնելու պարսկային քաղաքաց յափշ-
տակութեանց մէջ առած դիպակներն
և ոսկանակուռ վաղակաւորքը, եզիպ-
տոսի մէմլուքներէն խլած ոսկին և գո-
հարքը, Հռոդոսեան Ասպետաց գան-
ձուն տպագիրներով զարդարուած ոս-
կի դաշխուրա՜նքը, Բունաստանէն և
Մաճառստանէն կորդած Անահայ և
Ապողոնի արձանաց իրանքը, և քաղա-
քաց և դղեկաց բանալիներ, և այլք՝
յեսարոս կղզիէն հայտնիած պատանե-
կիկները, և աղկուհիք իբրեւ Բու-
լոր ամեն տեսակ անբաւ պարէներն որ
կու գային ի Պալատն՝ Ափրիկէի, Գա-
րամանիոյ, Մոսէայի նաւահանգիստնե-
րէն, եզեան ծովէն, կ'անցնէին կամ կը
կենային այն որմոց մէջ. և հաղարապե-
տաց և քարտուղարաց բանակ մ'անդա-
դար զբաղած էին արձանագրելու, հա-
տուցանելու, կարգաւորելու, ժամանակ
սաստատելու ունիկըրութեանց, հրա-
մաններ տալու: Պուրսայի և Տրապի-
զոնի գերուհեաց վաճառանոցաց վաճա-
ռականքն՝ երկրորդ դրան առկը կը
գանուէին, սպասելու իրենց մանելու
կարգին, Սուլթանին ոտանաւորներ ար-
տասանելու Պաղատէն եկած բանա-
ստեղծից հետ միաբան: Աչքէ ելած
վարիշներն, ոսկի դրամով լեցուն բա-
ժակով մ' իրենց փրկութիւնը գնելու
հկած՝ կը սպասէին փայլի մը պատ-
գամաւորաց քով, եկեալք ի նուիրել ի
պարգև Մեծի Տեառան երեքտասանու-
մեայ գեղանի կոյս մը, Անատոլիոյ հիւ-
ղի մը տակ զոտուած երեք ամիս
փնտռելէն ետքը. ինքնակալութեան

ամեն սահմաններէն դարձած լրտեսաց
մէջ, արգարութիւն խնդրելու համար
հեռաւոր գաւառներէ հասած խոնջ
ընտանեաց քով, Ստամպոլի ստորին
ռամկին կանանց և մանկանց մէջ՝ ըն-
կալեալք ի ներքս իրենց տրտունջը ա-
տենին ներկայացընելու համար, եւ ա-
տենին օրերն, հետաքրքրաց ծաղրա-
ծութեանց մէջ, իշու մը վրայ հեծած,
մօրուքնին ածիլած և կանացի խոյր մը
զլուխներնուն վրայ՝ ապաստմբ գաւա-
ռաց դեռագանաց, և չափունելու վարդա-
կաւորք պնչատած ափսոսան իշխանաց
լիր պատգամաւորաց անկէ անցնելին
կը տեսնուէին. անկէ Տէրութեան սպայ-
քըն՝ որ յանգէտս կ'ելլէին հեռաւոր
վարչի մ'աղնուտգին շալ մը՝ Մեծ վէ-
ղիրին պարգէ՛ տանելու համար, որ իր
ժալուածոց մէջ կը ծածկէր իրենց մա-
հուան վճիռը. անկէ փառամոյից ճա-
ճանափալ երեսքն՝ որ նենգութիւն նա-
խարարութիւն մը ստացեր էին, և անոնց
տմայի դէմքերն որ արձաւոր դժբաղ-
դութե մը խուլ սպառնալիքը առնեն
մէջ լսեր էին. անկէ այն հարսիշէրիք
ներուն տանողներն, անողորելի իբրև
զճակատողի, որ ձիու մը գաւակին
վրայ՝ կ'երթային երեքհարիւր մլոն հե-
ռու, փոխարքայի մը պալատան աւեր
և մահ տանելու. անկէ արքունեաց
սարսափելի համրներն՝ զրկուած եօթն
Աշտարակաց ստորերկրիայ տեղեաց
մէջ՝ հռչակաւոր գերիքը խնդրելու: Եւ
ստոնց առկը կ'ելլէին իւլէմաներն,
պէյներն, մուլաններն, էմիրներն, որ կը
դառնային կամ կ'երթային ունիկըրու-
թեանց՝ գլխակոր, վարակնեալ, ձեռ-
քերին ծածկած մեծամեծ թեզանեաց
մէջ. վէզիրք, որ Ղուրանը զրպանաց
մէջ կը կրէին կարգալու համար, եթէ
պէտք ըլլար, մեռելոց աղօթները. մեծ
վէզիրն, տիրագլուխ լրտեսեալ ի դահ-
ճէն, որ մեռնելու միշտ պատրաստ ըլլա-
լու համար, պարեգօտին տակ կը կրէր
զհրամանագիրքը: Եւ ամենքն կ'անցնէին
ամփոփութիւն, ծանրաբայլ, լուսով կամ
զգուշաւոր և յարգարուն լեզու մը ցած
ձայնով խօսելով՝ Պալատան յատուկ և

անդապար կը տեսնուէր ծանր և հե-
տաքննիչ հայեցութեան փոխանակել մը,
և ճակատու և կրծից վրայ ձեռքեր զը-
նել մը, հանդերձ ընդհատեալ փոփը-
սոյններով, վերարկուաց և հողաթափից
չափաւոր շրշիւնով մը, վաղակաւորաց
մեղմ շաշիւնով մը, միանձնական և
տխուր չգիտեմ ինչէ մը, որ ընդգլխա-
պատկեր մ'էր երեսաց պատերազմա-
մական ամենաթեան, գունոց չբեղու-
թեան, զինուց փայլփայլման: Ամեն ա-
շաց մէջ մտածում մը կը կարգացուէր,
ամեն ճակատուց վրայ կը տեսնուէր
մարդու մ'երկիւղն, որ ամենքէն վեր էր,
որ ամենայնի նպատակ էր, որուն առ-
ջն ամենայն ինչ կը խոնարհէր, կը սո-
ղար, կ'ոնշանար, և կարծես թէ ա-
մեն բան անոր կերպարանքը կը ներ-
կայացնէր և ամեն շառաչմանց մէջ իր
անունը կը լսուէր:

Այս գաւթէն կը մոցուէր երկրոր-
դին մէջ Պապ-էլ-սէլամի, կամ գու-
ռըն խաղաղութեան, մեծ դռնէն, որ
դեռ անվթար է երկու ստուար աշտա-
րակաց մէջ, ընդ որ առանց հրամանա-
գրի և ոչ հիմայ կրնայ անցուիլ: Հին
ատենն կրկին մեծամեծ փեղկեր կը
փակէին զայն՝ առաջին գաւթին կող-
մէն, և ուրիշ երկուք երկրորդին կողմէն,
այնպէս որ երբ ամենն փակուած էր, կը
մնար ներսն մթին սենեակ մը, ուր մարդ-
մը կրնար ծածկապէս սպանուիլ: Հօն
տակը կային գահճաց խուղերն, որոնք
խաւարչայն անցքէ մը կը հաղորդա-
կցէին ատենին սրահին հետ, Հօն կ'եր-
թային սպասելու իրենց վճռոյն՝ աչքէ
ելած աւագորներն, և յաճախ հօն նոյն
կէտին կ'ընդունէին վճիռը և մահը:
Ուրիշ անգամներն երեսէ ինկած վա-
րիչն կամ վէղիւրն պատճառանօք մ'ի
Պալատն կը կանչուէր. կու գար. կ'անց-
նէր անկասկած ձախ կամարին տակը,
ատեններ կը մտնէր, կ'ընդունուէր բա-
րեմոյն Ժպիտով մը կամ կակուղ խըւ-
տովեամբ մը, որ միայն հեռաւոր
պատիժ մը կը սպառնար, և հրաժա-
րեալ, վերադին կ'անցնէր յանդորրու

դրան տակէն: Այլ յանկարծակի, ա-
ռանց մէկը տեսնելու, սուր մը կը մտնէր
իրանն կամ վիզը խեղդան մը, և կը
տապալէր առանց դէմ կենալու ժամա-
նակ ունենալու: Օրհասականին աղա-
ղակէն, երկու գաւթիմներէն վայրկեան
մը հարիւր դէմքեր կը դառնային. ապա
ամենքը լուծեամբ իրենց դործը կը
շարունակէին: Գլուխը Պապ-Հիւմայու-
նի խորիշ մը մէջ կը տարուէր, դիւ-
կըն Սուրբ Ստեփանոսի ափանց ագ-
ռաներուն, լուրը առ Սուլթանն, և
ամենայն ինչ վճարեալ էր: Դեռ այժ-
կողմը կամարին ներքև կայ բանտին
երկաթապատ գռնակն, յոր կը նե-
տէին դատապարտեալքը, երբոր առ
ժամանակ մը մահուան հրամանը կ'ու-
շացնէին կամ իրենց հոգեվարքը եր-
կնցնէին: Համար կամ ընդհակառա-
կըն զիրենք աքսոր զրկելու:

Պապ-էլ-սէլամի տակէն ելելով, ան-
միջապէս կը մոցուի յերկրորդ գաւթին:
Հօս կը սկսիս աւելի կենդանի զգալ
«երկուց ծովուց և երկուց աշխարհաց»
Տիրոջ նուիրական օգը, և ով որ ա-
ռաջին ռնդամ հօն միջամուխ կ'ըլլար,
հազիւ մտած ակամայ կանկ կ'առնէր
երկիւղի և յարգանաց զգացմանէ մը
բըւնուած:

Անկանոն լայնատարր գաւթի մ'եր,
տարապայման սրահ մը բացօթեայ
երկնիքի տակ, չըլապատեալ շնորհա-
շուք շինուածներով և արծաթազօծ և
ոսկեփայլ դմբէթներով, սիւռուած ա-
մենագեղ ծառոց խումբերով, և ընդ-
միջեալ կողմնակի հսկայաձև նոճեաց
կրկին ճամբաներէ: Չորս կողմը կը
շրջապատէ գեղեցիկ կամարակապ մը,
սպիտակ կիճէ նուրբ սեանց վրայ յե-
ցած, և ծածկուած գուրս կարկառեալ
կապուրդապատ ծածկով մը: Երբ մտնես,
աշխարհով կայ ատենին սրահը, փողփո-
ղուն գմբէթով մը. անկէ անդին, մեծա-
մեծ ընդունելութիւն սրահը, որուն առ-
ջըն Մարմարայի մարմարիոնէ վեց ա-
հագին սիւններ վեր կը բռնէին այեձև
քիւով լայն տանիք մը, խարիսխներ,

խոյակներ, պատեր, ծածկեր, դռներ, կամարներ, ամենայն ինչ քանդակած, ազուցիկ, նկարած, ոսկեզօծած, ամենաթեթեւ և նազեղ ինչպէս ականազարդ ասղնագործ վրան մը, և ստուերատեսալ սոսկավիթխոր սօսիներու խումբէ մը: Ուրիշ կողմերէն, կային դիւաններն, սրահներն՝ ուր պատուոյ զգեստքն կը պահուէին, վրանաց մթերանոցքն, մեծ սե ներքինւոյն տունն, Արքունեաց խոհակերոցքն: Հօս կը կենար այն մեծ Տեսուչն, Գմբեթի խորհրդականէն աւելի զբաղած, որ իրեն հրամանին տակ յիսուն ենթատեսուչներ ունէր, որոնց կը հնազանդէր խոհակերաց և շաքարագործաց բանակ մը, օգնեալք, մեծ պատահարաց մէջ, ինքնակալութեան ամեն կողմերէ բերուած արուեստաւորներէ: Հօն՝ ատենին օրերն վէզիրներու ճաշը կու տային. հօն կը պատրաստուէին թլփատութեանց և իշխանական հարսանեաց առթիւ, քաղցրաւենեաց հոգակաւոր պարտէզներն, շաքարէ արագիւններն, բազէներն, ընձուղտներն, ուղտերն, խորովածոյ խոյբը՝ յորոց կ'ելլէին թռչնոց երամներ. որոնք յետոյ մեծ շքով Զիարձակարանին հրապարակը կը տարուէին. հօն հազար ձեւերով և հազար գոյներով անթիւ քաղցրաւենիներն, որ կ'երթային հալելու կանանոցին ախանձոտ անթիւ բերանիկներու մէջ: Մեծ հանդիսից մէջ խոհանոցաց քով կը վիտային Սուլթանին և կանանոցին վրանները Պալատան պարտիզաց մէջ և վոսիփորի բլրոց վրայ կանգնող ութհարիւր գործաւորք, և երբ ալ բաւական չէին ըլլար լայնարձակ շտեմարանաց վրանքն, տորմիլին առագաստներով և կայսերական դաստակերտաց անտառակներէն արմատախիլ ըրած ամբողջ նոճիկներով խորանքը կը ձևացնէին: Հօն մերձաւոր մեծ ներքինւոյն տունը փոքր արքունիք մ'էր, որուն և երրորդ գաւթին մէջ կ'երթար և կու դար սեւաւ ներքինեաց, գերուհեաց և սպասաւորաց անդադար թափօր մը: Սուլթանին երթալու Դեսպանութիւնքն այս գաւթիլը կ'անցնէին: Այն ատեն բոլոր

կամարակապը կարմրագոյն կտաւով զարդարուած էր. որմունքը կը փայլփրլէին, գետինը դահլճի մը յատակին պէս մաքրուած էր. երկուհարիւր ընդ եէնիլէրի, խոփահի և սիլիհտար, որ ատենին պահապանքը կը ձևացնէին, իշխանաց պէս հազուամե և զինուած՝ նոճեաց և սօսեաց ստուերացը տակ շտարուած կը կենային, և սպիտակ ներքինեաց և սեւաւ ներքինեաց գունդեր, մաքրափայլք և անուշահոտք, դրան երկու կողմը կարգաւ կը կենային: Այս երկրորդ գաւթին մէջ ամենայն ինչ Մեծ Տիրոջը մերձաւորութիւնը կ'իմացնէր. ձայներն աւելի ցած կը հնչէին, շարժումներն աւելի ամփոփ էին, չէր լսուեր հօն ոչ ձիոց ոտնաձայն և ոչ աշխատութեան շառաչ. ծառայք և զինուորք լուռմուռ կ'անցնէին. և բոլոր ցանկապատին մէջ նուիրատան խաղաղութիւն մը կը տիրէր, խռովեալ միայն թռչնոց յանկարծակի շառաչէն, որ կը փախչէին ծառերէն, և զափուճուներէն փակուած երկաթէ մեծամեծ դրանց ուժգին բաղիւխնէն:

Գաւթին բոլոր շինուածներէն միայն ատենին սրահը տեսայ, որ գրեթէ անարատ է, ինչպէս որ էր երբ կը գումարէր հօն Տիրութեան վեհազոյն ժողովը: Կամարակապ մեծ սրահ մ'է, բարձրէն լուսաւորուած, մաւրիտանական պատուհանիկներով, և ոսկեղէն արաբ դարդուք պաճուճեալ ազուցիկ մարմարիոններով, առանց ուրիշ կահուց, բայց եթէ բազմոցը, յորում կը նստէին խորհրդարանին անդամք: Մեծ վէզիրին տեղւոյն վրայ կայ դեռ այն ոսկեզօծ փայտէ վանդակով մը փակուած պատուհանիկն, որուն ետեւը նախ Սուլթանն մեծն և ապա այլ ամենայն փառիշտ շահաւոր թերակայ կ'ըլլային, անտես կամ կը կարծուէր որ նստից առընթիւ թակայ ըլլային. ծածուկ անցք մ'այն թագուն սենեկիկէն կը տանէր երրորդ գաւթին կայսերական օթեանքը: Այս սրահին մէջ շաքարթը հինգ անգամ կը նստէր խորհրդականաց մեծ ժողովը,

գահերէց բազմեալ 'ի մեծ վէզիրէն : Պատրաստութիւնը հանդիսաւոր էր : Մեծ վէզիրն մօտից դրան գէմը կը նըստէր . իրեն մօտ Գմբէթին վէզիրը , դափուտան—փաշան , մեծ ծովակալն . Անտաղիոյ և Ռումելիի երկու մեծ դատաւորը , Սսիոյ և Եւրոպայի գաւառաց առնեակալութեան ներկայացուցիչք . մէկ կողմէն պետութեան գանձապետը . միւս կողմէն լիշանձին , որ Սուլթանին կնիքը կը գնէր հրովարտակաց վրայ . աւելի անգին , ալ ու ձախ , իւլէմայից և սենեկապանից կրկին գունդեր . անկիւնները՝ չափուշներ , հրամանները տանողը , տանջանաց գործադիրը , ամենայն անկարկուծիւն և ամենայն հայեաց իմանալու վարժած : Տեսարան մ'էր՝ որուն առջիւր կը զողային յանդգնագոյնք և ամենէն անմեղք երկիրիւ կը հարցափորձէին իրենց խղճմբտները : Բայր այն ամբոխը կը կենար հօն անկարեկան դէմքով . խաչաձև բազկօր , ծածկեալ ձեռքը , կամարէն իջած անտրոշ լոյս մը , տժգոյն ոսկւոյ գունով մը կը ներկէր սպիտակ ապարօջը , ծանր գէմբերը , անշարժ երկայն մարտաբեր , ճոխ մուշտակքը , դաշունից ականակուռ երախակաքը : Յառաջին տեսութեան ժողովն կ'ընծայէր զգեստաւորեալ և նկարեալ արձանաց մեծ խմբի մը մեռելատիպ երեւոյթը : Սփրիդը մտնողին և ելողին քայլը չէին լսեցընէր տար , օդն կը հոստուէր մուշտակաց բուրուժը , կճնայ որմունք կը ցուլացընէին գաւթին ծառոց կանաչութիւնը . լուսութեան վայրկեններուն թռչնոց երգերն կը հնչէր սալով փողփողուն կամարին տակ . ամենայն ինչ այն սարսափելի դատաստարանին մէջ քաղցր և շնորհալից էր : Հանդարտիկ և միտկերպ ինչպէս առուի մը խոխովիւնը մի առ մի կը հնչէին ձայներն , առանց կանգուն որաքին մէջ տեղն ամրաստանողին կամ ինքզինքն անմեղադիր ընողին՝ որու բերնէն ելլեն իմացուելու : Հարիւր մեծաւոր աչքեր միայն մէկու մը գէմբը կը հետազօտէին : Հայեցումներն անբնականք էին , խօսքերն կշռած , մտածու-

թիւնքը գուշակուած երեսին ամենէն խուսափուկ շարժումներէն : Մահուան վճիռներն կ'ելլէին հանդարտ բառերով , յետ երկայն դաշն խօսակցութեանց , կը լսուէին գերեզմանական լուսութեամբ մը . և կամ՝ շանթի պէս յեղակարծուց կը ճայթէին , և իրենց արձագանգունէն այն սոսկալի խօսքերն , որոնք յետին վայրկենից մէջ կ'ելլէին յուսահատ հոգիէ . և այն առնեակնարկութեամբ մը , վաղակաւորը կը խորտակէին զողնայարս , արիւնը կը ցայտէր գորգոյ և կճեաց վրայ . խփահիններու և եէնիչէրեաց աղաներ դաշունի հարուածով ծակծկած կ'ինկնային . կուսակալը և գայմագամը լարը վղբերին և աչքերնին ձակաւանէն դուրս յերկիր կը տապալէին : Վայրկեան մը վերջը , զիականքն տարածուած էին սօսեաց ըստուերաց տակ , կանաչ լաթով մը ծածկած . արիւնն լուացուած էր , օդը անուշահոտած , գահիճք իրենց տեղն , և ժողովը կը շարունակէր իր նիստը անկարեկան գէմքով , ծածկած ձեռքերով , հանդարտ և միակերպ ձայներով , մալրիտանացի պատուհանիկներուն անորոշ լուսոյն տակ , որ մեծ ապարօջներ և մեծ մօրուքը տժգոյն ոսկւոյ գունով մը կը ներկէր : Նաև այն կատարի դատաւորքն իսկ կը ցնցուէին , երբ Մուրատ Դ կամ Սէլիմ՝ երկրորդ , տժգոհք ատենէն , կայսերական դաշտանոցին ոսկեգօծ վանդակը մոլեգին բռնցիով մը կը ճռնչեցընէին : Յետ երկար լուսութեան մը և չփոթեալ աչք փոփոխակի իրարու խորհուրդ հարցընելու մը , նորէն նիստը յառաջ կը վարէին , անկարեկան գէմքով և հանդիսական ձայնով , այլ սառուցեալ ձեռքերնին մեծամեծ թեզանեաց մէջ երկար ժամանակ կը զողդողային , և իրենց հագուոյն համար Աստուծոյ կ'աղօթէին :

Այս երկրորդ գաւթին ծայրն , որ կերպով մ'Աբբունի պալատան դեսպանադիտական գաւթին էր , կը բացուէր երրորդ մեծ դուռն , կողմնակի ունեւնայով մարմարեայ սիւներ և 'ի դուրս

կարկառեալ տանիք մը, որուն առջև գիշեր ու ցորեկ պահապան կը կենար սպիտակ ներքինեաց դումարտակ մը և գափուճուններու գունդ մը, վաղակաւորներով և գաշունով զինուած :

Հուշակարմ Գառ — Սէտտէթ կամ՝ դուռն էրանութեան էր այս, որ կը հանէր յերրորդ դարիժն. այն սրբազան դուռը՝ որ գրեթէ չորս դար փակուած մնաց ամենայն քրիստոնէի, որ չի ներկայանար յանուն արքայի մը կամ ժողովրդեան մը . խորհրդաւոր դուռնն՝ զոր 'ի զուր բալխից հզօր և անուանի հազար ճանապարհորդաց աղերսաւոր հետաքրքրութիւնն . Կուռն՝ ուստի ելին և սփռեցան յաշխարհ այնքան գողտրիկ բաշաղանք և այնքան ցաւոյ վիպասանութիւնը, այնքան գեղոյ և հեշտութեան ցնորներ, այնքան տարփանաց և արեանց զաղտնեաց անորոշ յայտնութիւններ, և հեշտական և սոսկալի բանաստեղծութեան անսահման օդ մը . արքայից արքային Նուիրատան հոյակապ դուռն, զոր ժողովուրդը զարհուրանաց զանխուլ զգացմամբ մը կ'անուանէր, իբրև դիւթեալ ցանկապատի մը դուռն, որուն մէջ անսուրբ արարած մը մոնելով քարացած պիտի մընայ կամ տեսնէ բաներ՝ զոր մարդկեղէն լեզուն պիտի չկարենայ նկարագրել . դուռն՝ որուն առջև նաև հիմայ ցրտագոյն երևակայութեամբ և զգացմամբ ճանապարհորդը կ'արձանանայ և տեսակ մը դեղեանոք և ապշութեամբ կը նայի իր դրանաձև պիտարկին ստուերին, որ կ'երկննայ թերափակ դրան լեռոց վրայ :

Եւ սակայն հօն ալ, այն պերճապայծառ դրան դիմաց, հասաւ զինուորական ապստամբութեանց մենչող ալիքն : Մանաւանդ թէ կրնայ ըսուիլ, որ այն մեծ գաւթին անկիւնն, որ կայ ընդ մէջ առնէի արահին և Սէտտէթի դրան, Պալատան այն տեղն է՝ ուր ապստամբից կատաղութիւնն յանդգնագոյն և արիւն ուշտ արարուածքը գործեց : Մեծ իշխանն սրով կը վարէր, և սուրն իրեն օ-

րէնք կու տար : Արքունի Մեծ Պալատան մուտքերը պաշտպանող տիրապետութիւնն ինքնին էր որ կը բռնաբարէր ներքստկողմերը : Այն ատեն կը տեսնուէր թէ ինչպիսի բեկանուտ պատուանդանի վրայ յեցած է սպառնալից հակայն, երբ իր չորս կողմէն կը քաշէին վաղակաւորաց նեցուկներն : Եէնիէրեայ և խոփահաններու զինեալ խառնազանճներն 'ի մէջ գիշերի, ջահ 'ի բոլին, առաջին և երկրորդ գաւթին դռները մըծոյ հարուածներով կը թաւալէին, և հորդան կու տային հօն սուսերաց ծայրը շարժելով վէպիրներու զուլանքը խնդրող աղերսագիրքը, և իրենց մահաշուկ աղաղակներն կը գուռային անբռնաբարելի պատերէն անդին, իրենց Պետաց նուիրական ցանկապատին մէջ, ուր ամենայն ինչ խառնակութիւն էր և սոսկումն : Ի զուր 'ի բարձանց որմնոց ոսկոյ և արծաթոյ դրամոց պարկեր կը նետուէին . 'ի զուր միւֆդին, շէխերն, իւլէմաներն, Արքունեաց մեծամեծքն, շիթեալք, կը ճառախօսէին, կ'աղաչէին, քաղցրութեամբ կը ջանային խոնարհեցնել բարկութեամբ բորբոքած բաղունները . 'ի զուր վայրտէ-սուլթանք՝ մեռելատիպ, վանդակապատ պատուհաններէն պզտի անմեղ որդիքնին կը ցուցնէին : Հազարդ խեան ճիւղն, չլթալաղերն և զաչացու, իր աւարը կ'ուզէր, կենդանի զահեր, յոշատելու միսեր, հոսելու արիւն, նիզակաց վրայ տնկելու կառափունք : Սուլթանք ատամնաձներէն կ'երևէին, կը համարձակէին մինչև դրան պատնիշաց վրայ, դողդոջուն ներքինեաց և մանկլաւկաց մէջ, անօգուտ դաշոյններով զինուած . կը վիճէին մի ըստ միով գլխոց վրայ, կը խոստանային, կու լային, շնորհք կը խնդրէին յանուն մարց իւրեանց, որդւոց իւրեանց, Մարգարէին, ինքնակալութեան փառաց, աշխարհի խաղաղութեան : Սպառնալեաց և նախատանայ խուրբախ մը և ջահից և վաղրից թալկացուցիչ շարժիլ մը կը պատասխանէր իրենց սկիար աղաղակն .

րուն, իւրայն ատեն խարխափելով երա-
նութե գոռնէն գուրսկ'ելլէին մի առ մի, և
կ'ինկնային արեան ծարաւի զազանաց
մէջ տեղն՝ գանձապետք, վէզիրք, ներ-
քինիք, մտերիւք, զօրավարք և հետ-
զհետէ կ'ինկնային պատառոտեալ կ'հա-
րիւր սուսերաց և տգեղացեալ ՚ի հա-
րիւր ոտից, Այսպէս Մուրատ Գ կը նե-
տէր իր սիրելի բազէպանը զՄէհմէտ, և
զոր իրեն աչաց տակը յօշ յօշ զիշա-
տեցին. այսպէս Մէհմէտ Գ կը նետէր
զԳրզլար—աղասը Օսման և զԿլսաուրն
սպիտակ ներքինեաց զԽազնէֆէր, և
ստիպուած էր ողջունելու զինուորու-
թիւնը արինաթաթաւ երկու դիա-

կանց զիմաց. այսպէս Մուրատ Գ կը
նետէր հեծեծելով զՀաֆիզ մեծ վե-
զիրն, որուն լանջը և իրանը կը պատա-
ռէին եօթնետասն դաշոյնք. այսպէս
Մէլիմ կը նետէր իր ասենին բոլոր զը-
լուխներն. և միշտդեռ անիծելով ճըն-
շեալ ՚ի ցաւոյ և յամօթոյ փատիշահը
կը մոռնէին իրենց սենեակներն, ապրա-
տամբից հազար ջահերն կ'ընթանային
Ստամբուլի ճամբաները, լուսաւորելով
սրարբեալ ամբոխին մէջ յաղթանա-
կաւ գետնաւքարը տարուած զիականց
մնացուածք:

Եր շարունակուի:

Բաւանայի չրանցքին աշխատու-
քիւնքը. — Նոր Օրբէանի Տիմոքիդ
լրագիրն, իրեն թղթակիցներուն մէ-
կուն գրուածը հրատարակեր է, որ խօ-
սակցութիւն մ'ունեցեր է ընդ Տէ Գոս-
դայի, յԱսրինվալէ, պարանոցին բաց-
ման համար Լեսսերսի ծրագրաց նիւ-
թոյն վրայ: Ըստ այսր գրուածոյ, գրե-
թէ երեքհարիւր մարդ կան՝ որ եռան-
կիւնչապիութեան և ծրագիրներ յօրի-
նելու պատրաստ են. ուրիշ աշխատութիւն
չեն ըներ: Վերպրիւկ, որ Ռեզլիւի հե-
ռաւորութեան ատեն առժամանակեայ
տեսչի պաշտօնը կը կատարէ, նորոգ ՚ի
Բարիզ կանչուելով, կ'ըսէ, որ ըստ իրեն
գիտութեան՝ պեղման աշխատութեանց
ձեռք պիտի չզարնուի 1882 դեկտեմ-
բեր ամսէն առաջ:

Ընկերութիւնը գնեց Բանամայի կրակնո
Օդէլը, 950,000 Ֆր. գնով: Այս չինուա-
ծը, որ քաղաքին գեղեցկագոյնն է, պի-
տի փոխիստի, հօն ընդհանուր մատա-
կարարութեան պաշտօնարանը հաս-
տատելու համար: Ասրինվալի և Բանա-
մայի բնակիչք կը մաղթեն որ յաջողու-
թեամբ իրենց նախագուշակութիւնը
ստուգուի. իրենք կը գովեն թէ ծրա-
գիրը լաւ չինուած և գործադրելիք են,
և յայտնապէս բարի վերջ պիտի ունե-
նան: Քանի որ սկսուած են չափման
աշխատութիւնքը, ՚ի պարանոցին կա-

լուածոց արժէքը չորս կամ լաւ ևս հինգ
անգամ կրկնապատկեր է: ՅԱսրինվալ
և ՚ի Բանամայ ժողովուրդը կ'աճի արա-
գապէս, և չինութեան աշխատութիւն-
քն այս երկու քաղաքիս մէջ շատ գոր-
ծունեայ են. մասնաւորապէս Բանաման
է որ օգուտ կը քաղէ իրաց այս յառա-
ջագիմութենէն:

Ընկերութեան մէջ գործածած բոլոր
մարդիկն զաղդիւրացիք են: Տէ Գոսդայի
մեկնելէն քանի մ'օր առաջ, ընկերու-
թիւնը իրենց ռոճիկը 25 սէնդ (1 Ֆր. 25)
նուազեցուցեր էր, և այս կերպով մ'ի
գործոյ ետ կեցուցեր էր զիրենք. քանի
մ'օր աշխատութիւնքը դադրեցան, և
շատ գործակատարք հաստատապէս
մեկնեցան: Անոնցմէ ոմանք Տէ Գոսդայի
հետ մեկնեցան նոյն նաւով ՚ի Միա-
ցեալ—Նահանգս: Ուրիշ կողմանէ երկա-
րատն ՚ի գործոյ ետ կենալ մը կարելի
չէ. վասն զի ընկերութիւններ չկան զա-
նոնք յոտին բռնելու, և գործաւորը ըս-
տիպուած են գործերնին ձեռք առնուլ,
թէ որ անօթութենէ չեն ուզեր մեռ-
նիլ: Առաջ տուլար մը կը հատուցանէին,
զարդիս անոնք 75 սէնդէն (3 Ֆր. 75)
աւելի պիտի չունենան:

Ի հաւատարիմ և մանաւանդ անշա-
հախնդիր աղբիւրէ առած ապացուցից
նայելով, գործերը շատ այնպէս ուրա-
խացուցիչ կերպարանաց մը տակ չեն: